Արձանագրություն N 3

<<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

30 սեպտեմբերի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խոջայան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Վասիլյան /գնահատող/ Ն. Քեռյան /գնահատող/,
Շ. Իսախանյան /բացող/ Ա. Աշուղյան /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Պայմանագիր կնքած կազմակերպության կողմից ներկայացված ծանուցման մասին

(Ռ. Խոջայան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն պայմանագիր կնքած անձի կողմից ներկայացված ծանուցման՝ ընկերությունը հրաժարվում է սույն ընթացակարգի շրջանակներում ձևավորված ցածր գնով ապրանք մատակարարելուց:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ռ. Խոջայան)

<<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող անդամների կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

h/h	Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Կոմպմարկետ>> ՍՊԸ	Բավարար
2	<<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ	Բավարար
3	<<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Բավարար
4	<<ՍԵԳ>> ՍՊԸ*	Անբավարար
5	<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ*	Անբավարար
6	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ*	Անբավարար

**Մասնակիցների անբավարար գնահատականը պայմանավորված է սույն ընթացակարգի թիվ 2 արձանագրության 3-րդ բաժնում նշված հիմնավորմամբ:*

Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ - 0:

3. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ռ. Խոջայան)

Համաձայն գնահատման արդյունքների ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվում <<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն և 3-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվում <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Խոջայան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման

ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 30.09.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 30.09.2016թ ծանուցել <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ռ. Խոջայան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 06.09.2016թ., ժամը 10:30-ին, ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ, իրավաբանական և գնումների կազմակերպման բաժին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Խոջայան

Անդամ՝ ---------- Տ. Վասիլյան

---------- Ն. Քեռյան

---------- Շ. Իսախանյան

---------- Ա. Աշուղյան

Քարտուղար ---------- Ա. Համբարձումյան